Հաստատված է ռեկտորատի

N 41/18 նիստում

26.11.2018թ.

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ուսանողների կողմից դասախոսական կազմի և ամբիոնների պարբերական գնահատման գործընթացի

ընթացակարգ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն ընթացակարգով կարգավորվում է ուսանողների կողմից <<Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի (այսուհետ համալսարան) դասախոսական կազմի և ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման գնահատումը:

1.2 Գնահատման նպատակով կիրառվում է <<Դասախոսն ուսանողի աչքերով>> էլեկտրոնային ծրագիրը (հավելված 1՝ <<Դասախոսն Ուսանողի Աչքերով>> հարցման էլեկտրոնային ծրագրի բնութագիր):

2. Հարցման համար անհրաժեշտ տեղեկատվություն

2.1 Յուրաքանչյուր ամբիոն ամեն կիսամյակ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավարին <<Մալբրի>> էլեկտրոնային փաստաթղաշրջանառության համակարգի միջոցով համաձայն մշակված ձևի ուղարկում է տեղեկանք նախորդ կիսամյակի ընթացքում դասախոսների փաստացի ծանրաբեռնվածության վերաբերյալ՝ գարնանային կիսամյակի ծանրաբեռնվածությունը մինչև սեպտեմբերի 10-ը և աշնանային կիսամյակի ծանրաբեռնվածությունը մինչև փետրվարի 10-ը (հավելված 2):

3. Դասախոսների գնահատման գործընթացը

3.1 Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակ համալսարանի Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի աշխատակիցների կողմից:

3.2 Հարցումն անցկացվում է համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողների շրջանում:

3.3 Յուրաքանչյուր ուսանող պատահական ընտրության սկզբունքով ստանում է իր գաղտնաբառը, որով հնարավորություն է ստանում մուտք գործել <<Դասախոսն ուսանողի աչքերով>> էլեկտրոնային համակարգ և առցանց տարբերակով մասնակցել հարցմանը:

3.4 Էլեկտրոնային ծրագրում ներառված են ինչպես փակ, այնպես էլ բաց բնույթի հարցեր (նկարագրությունը հավելված 1-ում):

3.5 Դասախոսի և ամբիոնի աշխատանքի գնահատումն ուսանողն իրականացնում է էլեկտրոնային ծրագրի համապատասխան դաշտերում՝ գործունեությունը գնահատելով 1-ից 5 բալային համակարգով:

3.6 Ուսանողների կողմից գնահատման համար ծրագիրը բաց է մեկ ամսվա ընթացքում

3.7 Ուսանողները էլեկտրոնային ծրագրի միջոցով հատուկ տողով կարող են ներկայացնել նաև իրենց գրավոր առաջարկները և բողոքները:

4. Արդյունքների ամփոփումը և հաշվետվողականությունը

4.1 Արդյունքների ամփոփման մեխանիզմը և գնահատման չափորոշիչները նկարագրված են հավելված 1-ում

4.2 Հարցման արդյունքները <<Մալբրի>> էլեկտրոնային փաստաթղաշրջանառության համակարգի միջոցով, հարցման ավարտից հետո 20 օրյա ժամկետում ուղարկվում են համապատասխան ամբիոններ (հավելված 3)

4.3 Լրացուցիչ տեղեկատվության անհրաժեշտության դեպքում ամբիոնի վարիչը կամ դասախոսը կարող է դիմում ներկայացնել համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավարին*

4.4 Հարցման արդյունքները և ուսանողների կողմից նշված առաջարկները յուրաքանչյուր կիսամյակից հետո ենթարկվում են վիճակագրական վերամշակման և հաշվետվության ձևով ներկայացվում են համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Հարցման արդյունքները կարող են կիրառվել դասախոսների վերընտրության ընթացքում համալսարանի որակավորման խորհրդի կողմից: Այս դեպքում հաշվի է առնվում դասախոսների վերջին 5 տարիների ընթացքում ստացած գնահատականների միջինը

5.2 Հարցման արդյունքները ամփոփված և ընդհանրացված ձևով կարող են հրապարակվել համալսարանի կայքում կամ կիրառվել այլ նպատակներով

5.3 Ուսանողների կողմից դասախոսական անձնակազմի և ամբիոնների աշխատանքի գնահատման ողջ ընթացքում պահպանվում է անձնական տվյալների և տրամադրված տեղեկատվության գաղտնիության սկզբունքը, հարցումն անցկացվում է անանուն տարբերակով

5.4 Էլեկտրոնային ծրագրում ընդգրկված հարցերը կարող են փոփոխվել դրանց վերաբերյալ շահակիցների կողմից արված առաջարկությունների հիման վրա՝ հարցումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով

* լրացուցիչ տեղեկատվության հայցումը չպետք է հակասի սույն ընթացակարգի 5.3 կետին